

Ա. ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Մատչելի ձեռնուրկ գյուղ-դատարանների համար

ՀԱՅՀ ԴԵՐԱԳՈՎՈՐ ԴԱՏԱՐԱՆԻ ՇԱԽԱԳՈՒ
բնկ. Լ. ԿԱՐՊԻԱՊԵՏՅԱՆԻ առաջարանով



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ—1930

1859

11

Ա. ԽԱՆԴԱՄԻՔԱՆ


ՈՒ
38705

7.9

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ԱԶԵԼԻ ՃԵՌԱՎԵԼ ՊՐՈՊ-ՊԱՏԱՐԱՑՈՒԹԵՐԻ ԽԱԲԱՐ

ՀԱՅՀ ԳԵՐԱՊՈԵՅ ՊԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱհ
Ընկ. Լ. ՎԱՐԴԱԳԵՑՑԱՆԻ առաջարանով



ԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵԱԿ 6-1980



Հրատ. № 1266

Գրառեալ. № 5019 (բ) Պատ. № 355 Տիրաժ 3000

Պետհրատի Յերկըռըդ Տպարան Յերևանում

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դատարանը գասակարգալին պետության կարեռը որդաններից մեկն և, վորի միջնոցով տիրող դասակարգը իրավործում և իր իշխանությունը, պաշտպանելով իր շահերը ընդդեմ հակառակորդ դասակարգի Խորհրդային դատարանը նույնպես մի դասակարգային պետական որդան և այն առանձնահատկությամբ, վոր նա իրականացնում և պրոլետարական դասակարգի դիկտատուրան, պաշտպանելով աշխատավորության շահերը ընդդեմ շահազործողների: Խորհրդային դատարանի հիմնական անելիքներն են՝ 1) անխնա և վճռական պայքար մղել պրոլետարական դիկտատուրայի և նրա իշխանության դեմ ուղղված և նրա շահերին վնասող բոլոր տեսակի հանցագործությունների դեմ և 2) քննության առնել ու լուծել տնտեսական հարաբերությունների՝ հողի վրա ծագուծ վեճերը ու անդի ունեցող բարդիստները թե առանձին քաղաքացիների և թե պետական ու հասարակական հիմնարկանությունների միջև:

Այսպիսով խորհրդային դատարանը իրականացնում և հեղափոխական որինականությունը, ամբողջ նելով, խորացնելով և զարգացնելով պրոլետարական հեղափոխության նվաճումները: Սրանով և, վոր խորհրդագալին դատարանը զանազանվում և բուրժուական դատարանից, վորը սահմանելով «առհասարակ» որի-

Նականություն, ըստ եյության պաշտպանում և հականեղագիության շահերը:

Հեղափոխական որինականությունը և այն իրագործող խորհրդագլին դատարանի դերը ավելի կարևոր ե դառնում սոցիալիստական շինարարության ներկավերակառուցման շրջանում:

Բացի այն պալքարից, վորը խորհրդագլին դատարանը մղում ե գլխավորապես քաղաքում բյուրոկրատիզմի, ձգձգությունի, տնտեսական հանցաղործությունների դեմ, նա ունի խոշոր անելիքներ պյուղում — գլուղատնեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու շրջանում: Հողաշինարարության, կոլեկտիվացման, կոուակերացման հետ կապված հարցերը՝ դատարական գործերի զգալի տոկուն են կազմում:

Ահա այն ասպարեզը, վորոնց գոտարանը իր ճիշտ գասակարգային քաղաքականությամբ, հարվածելով կապիտալիստական տարրերին, թեթևացնում ու ճանապարհ և հարթում մեր տնտեսության վերակառուցման ու սոցիալիստական շինարարության ուժեղացման համար:

Սակայն խորհրդագլին դատարանը տարբերվում է բուրժուական դատարանից վոչ միայն իր դասակարգային խնդիրներով, այլ իր դասակարգային կառուցվածքով: Նա աշխատավոր մասսաների դատարան և, և նրա կազմը բազկացած և զուտ աշխատավորներից լինելով մասսայական մի որդան, նու հարմարվում է սոցիալիստական տնտեսության դարդացման ոլանջներին: Մասնավորապես՝ Խորհրդագլին Հայաստանի դատարական սխատեմը ունեցել ե զարգացման վորոշուապներ, վորոնց շարքին են պատկանում գյուղինոր-

հուրդներին կից դատական սեկցիաների հիմնումը և ներկալումս գյուղական դատարանի ձևակիրպումը:

Անշուշտ այս նոր դատական որդանի առաջ գուը հետեւանք և մեր անտեսության արդի շրջանի պահանջների. նրա խոշոր նշանակությունը հետեյալն է,

1. Իրականանում եւ դատարանների մասսայականացման սկզբունքը. յեթե մինչև այժմ լուրաքանչյուր շրջան տալիս եր 200 ատենակալդատավոր դատական աշխատանքներին մասնակցելու համար, ապա այժմ լուրաքանչյուր գյուղում ամբողջ աշխատավորական մասսան հնարավորություն ունի ընտրել իր միջից ակտիվ և կայուն 15—50 ատենակալ վորոնք գյուղիորհրդի կողմից ընտրված նախագահի հետ պիտի աշխատեն ամրացնել հեղափոխական որինականությունը գյուղում:

2. Դատարանն ել ավելի չե մոտենում աշխատավորության, կառուցվում ե նրա շեմքում, վորի շնորհիվ կրճատվում ե գործերի լուծման տեղուցությունը, վերացվում են ձգձգումները և այն անխուսափելի ծախքերը, վոր աշխատավոր գյուղացին ստիպված եր անել դատարանի հեռավորության պատճառով:

3. Խորհրդավին իրավունքը մասսայականանում և տարածվում ե աշխատավորության մեջ.

4. Գյուղական դատարանները թեթևացնում են վերադաս դատական որդանների ծանրաբեռնվածությունը. յեթե մինչև այժմ մենք ունեցել ենք ժողովադարաններ, վորոնց ամսական գործերի թիվը լեղել ե 300 և ավելի, ապա այժմ այդ յերեսույթը պետք ե վերանայ. Այդ հանգամանքը հնարավորություն կտա վերադաս դատական որդանների աշխատակիցներին

բարձրացնելու. թե իրենց և թե իրենց կայսերած վորչումների վորակը:

Սակայն սխալ կլիներ կարծել թե գյուղղատարանները կազմակերպվելուց հետո անմիջապես իմիճակի կլինեն լրիվ կտառարելու այն պարտավորությունները. վորոնք նրանց վրա յեն դրվում, սկզբնական շըրջանում նրանք կհանդիպեն դժվարությունների, կռւնենան զդալի թերությունների. Ահա այդ դժվարությունների ու թերությունների շատապ վերացումը խոշոր չափով կախված է առաջին ներթին արդարտղատության վերադաս մարմիններից, վորոնց իրավունք և վերապահված հսկողություն ունենալ գյուղղատարանների գործունելության վրա. տեղական որդանները ևս պետք է հարմարություններ ստեծնն զյուղղատարանների նորմալ աշխատանքի՝ համար. Արդարադատության որպանների, մասնավորապես ժողովադատավորների անմիջական կապը, իրավարանական սպնությունը ու ցուցութերը կաջակցեն գյուղղատարաններին՝ իրենց կոչման բարձրության վրա լինելու:

Ընկ. Խոնդամիքյանի մատչելի ձեռնարկից կոչված և անշուշտ իր ժամանակին ցույց տալու գյուղղատարանին զդալի և շատ անհրաժեշտ աջակցությունն. Այդ ձեռնարկը պետք է տարածել լայն չափերով. գյուղական դատավորները «գյուղական դատարաննի կանոնադրության» հետ միասին այս ձեռնարկը ևս պետք է իրենց ձեռքի տակ միշտ ունենան:

Եթեան.

Ա. Արդարադատությունն

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

Դեռ 1927 թ. սեպտեմբերի 18-ին ՀՍԽՀ կենտրոնական Գործադրիք Կոմիտեի հատուկ գորոշումով դյուղխորհուրդներին կից հիմնվեցին դատական սեկցիաներ։ Համաձայն այդ որենքի դատական սեկցիաներին իրավունք եր վերապահված քննելու դյուղական վայրերում ծագող քաղաքացիական գործերը մինչև 15 ո. գումարի սահմաններում, նուև մասնավոր մեղադրության կարգով հարուցվող ըլետական գործերը (վիրտվարանը խոսքով, գրավոր կամ գործողությամբ, ծեծ և այլն):

Դատական սեկցիաները այս լերկու տարվա ընթացքում ցույց տվեցին, վոր նրանք հեղինակության են վայելում աշխատավորության աշքում և կարողացել են արագացնել իրենց հանձնված գործերի լուծումը։

Այդ գրական կողմերի հետ միասին դատասեկցիաները ունելին և մի շարք թերություններ՝ այն եւ 1) դատական աշխատանքի ասպարեզ եր գրավված վոչ թե դյուղական ամբողջ գեմոկրատիան, այլ նրա մի մասը (գառափեկցիայի նախագահը և լելկու անդամը ընտրվում ե-

իին գլուղխորհըդի կողմէց). 2) շրջանալին դործ-կոմիները, վորոնց իրավունք եր վերապահված գանգատարկման կարգով քննելու դատսեկցիաների վորոշումները, բավարար չեն կարողացել դեկավարել նրանց դործունեյությունը և 3) դատսեկցիաները չեյին մտնում դատական սիստեմի մեջ և այս հանգամանքը բացասաբար եր անդրադառնում նրանց աշխատանքների վրա արդ թերությունները վերացնելու, ինչպես նաև դատարանը լայն մասսաներին մետեղնելու և ամբողջ գլուղական դեմոկրատիան հասարակական աշխատանքի և սոցիալիստական շինարարության ասպարեզ գրավելու նպատակով ՀՍԽՀ 6. բդ գումարման կենտգործկոմի 2. բդ նըստաշրջանը 1929 թ. նոյեմբերի 23. ին վերացնում ե դատական սեկցիաները և նրանց փոխարեն հիմնում ե գլուղական դատարաններ տվելի լայն իրավասությամբ քան դատսեկցիաները:

Այս գրքույկում մենք մանրամասնորեն, հոգված առ հոգված, կտանք այդ կարևոր որենքի մատչելի պարզաբանությունը:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԳԼՈՒԽ I

ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ

1. Յուրաքանչյուր գյուղական խորհրդի սահմաններում հիմնվում ե գյուղական դաստիան։

Գյուղական դատարանների որենքը կոչվում է «Կանոնադրություն գյուղական դատարանի»։ Կանոնադրություն ասելով պետք ե հասկանալ այն բոլոր կանոնները, վորով կարգավորվում են այս կամ այն պետական, հասարակական կամ մասնավոր հիմնարկության, ձեռնարկության, կամ կազմակերպության կառուցվածքը, նրա անելիքները և առհասարակ այն բոլոր հարցերը, վորոնք վերաբերում են նրա դործունելյության, որինակ, ասում են՝ գյուղխորհրդի, շրջգործկոմի, գավգործկոմի, փոխոգկոմի կանոնադրություն և այն։

Բոլոր դեպքերում կանոնադրությունը ուրենք ե, վոր հաստատվում ե կենտգործկոմի և

ժողկոմիսորհի կողմից և կարգավորում ե դրուդ-
խորհրդի, ըթգործկոմի, գավգործկոմի, փոխող-
կոմի կուռւցվածքը, անելիքները և առհասարակ
նրանց գործունելության յեղանակը:

Նույնը պետք ե առել և դրուղդատարանների մասին Գյուղական դատարանի կանոնադրու-
թյունը՝ կանոններ են, վորով վորոշվում են զլուղ-
դատարանի կառուցվածքը, իրավասությունը,
գործերի դատաքննությունը և այլ հարցեր։ Հա-
մաձայն այդ որենքի, ամեն մի զլուղխորհրդի
սահմաններում հիմնվում ե գյուղական դատա-
րան, ալդ դատարանների հիմնվելու զլխավոր
նալատակն ե՝ դատարանները ավելի մոտեցնել
աշխատավոր մասսաներին և արագ կերպով լու-
ծել այն գործերը, վորոնք լենթակա յեն զյուղ-
դատարանի իրավասության ներկայումս հայաս-
տանում կտ 1109 գյուղ 725 զյուղխորհուրդներ։
Եեթե վերջինների թիվը ավելի քիչ ե, քան զյուղ-
խորհուրդներինը ապա այդ բացատրվում ե նը-
րանով, վոր մի քանի վայրերում փոքր բնակ-
չություն ունեցող գյուղերը միանում են հա-
րեան զյուղի հետ և կազմում են ընդհանուր
զյուղխորհուրդ։ Մեր նալատակն ե յուրաքանչյուր
զյուղխորհրդի սահմաններում ունենալ զյուղդա-
տարան, առանձնապես այն վայրերում, վորեղ
զյուղխորհուրդները ընտրվում են ազգալին փոք-

բաժանությունների կողմից (թուրք,ռուս, լեզու):

2. Գյուղական դատարանը գործում է գյուղական դատավորի (նախագահի) յեվ յերկու ժողովրդական առենակալների կազմով:

Խորհրդավին դատարանի հիմնական խնդիրն եւ պաշտպանել հասարակուկան կարգը և աշխատավորության շահները։ Խորհրդավին իշխանության առաջին խել որերից դատարանները այն ողես են կառուցված, վոր աշխատավորության սռավել լաբն մասսաները կապված լինեն նրանք, հարաբեկություն ունենան մասնակցելու նրա աշխատանքներին։

Այս նպատակով թե քաղաքացիական և թե քրեական գործերի վերաբերյալ վճիռները դատավորը կայացնում եւ վոչ թե միանձնաբար, այլ յերկու ժողովրդական առենակալների մասնակցությամբ, վօրանք հանդիսանում են աշխատավորության ներկայացուցիչները։

3. Գյուղական դատավորին ընտրում է գյուղական խորհրդի պլենումն իր անդամների քը վից, մեկ տարի ժամանակով, նույն կարգով յեվ նույն ժամանակամիջոցով ընտրվում եւ նաև գյուղական դատավորի տեղակալը (նրա նիվանդության, գյուղից բացակայելու, մերժման, յեվ այլ դեպքերում նրան փոխարինելու նամար):

Ընտրության ժամանակ պետք է այնպիսի
թեկնածուների (գյուղխորհրդի անդամների) առ
նուններ տալ, վորոնք հայտնի յեն գյուղում ի-
րենց համեմատաբար ավելի ակտիվ հասարակական
գործունեյությամբ և ավելի հեղինակություն
են վայելում աշխատավոր գյուղացիների մեջ:

Գյուղական դատավորը միևնույն ժամանակ
հանդիսանում է գյուղդատարանի նախագահ:
Նախագահի բացակալության դեպքում նրան փո-
խարինում ե տեղակալը. որինակ՝ լեթե նախա-
գահը հիվանդանում ե, բացակալում է գյուղից,
կամ վորևե հոտքելի պատճառով հսարավորու-
թյուն չունի մասնակցելու գործի քննությանը
կամ լեթե նա կողմ է հանդիսանում գյուղդա-
տարանում քննվող քաղաքացիական կամ քրեա-
կան գործերում, կամ կողմերից մեկի ազգականն
և և այլն, այդ բոլոր դեպքերում նախագահին
փոխարինում ե նրա տեղակալը:

5. Ժողովրդական ատենակալներն ընտր-
վում են մեկ տարի ժամանակով գյուղի ընտրա-
կան իրավունք վայելող հաղաքացիների ընդ-
հանուր ժողովներում, 15 մինչեւ 50 հոգի, նա-
յած բնակչության թվին, սվյալ գյուղի սահման-
ներում ապրող յեզ ՀՅԽՀ Սահմանադրության
հիման վրա ընտրական իրավունք վայելող յե-
կու սեռի աշխատավարների թվից:

Ժողովրդական ատենակալներն ընտրվում են աշխատավոր մասսաների կողմից կարճ ժամանակով, վորպեսզի վորքան հնարավոր ե, մեծ թվով աշխատավորներ մասնակցեն դատարանի կողմից վճիռներ ու վորոշումներ կայացնելուն։ Այդ ընտրությունը կատարվում ե գյուղի քաղաքցիների ընդհանուր ժողովում։ Այդ ժողովները հրավիրում են գյուղխորհուրդները և գյուղխորհուրդների լիազորները՝ վերջինների հանձնարարությամբ։

Խոշոր գյուղական վայրերում նույն մարմինները ընդհանուր ժողովներ հրավիրում են նաև մի քանի մանր գյուղերի քաղաքցիների ընդհանուր ժողովներ։

Գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովներին կարող են ներկա լինել միայն ՀՍԽՀ Սահմանադրության համաձայն ընտրական իրավունք ունեցող 2 սեռի աշխատավորները։

Այդ ժողովում ընտրվում են մեկ տարի ժամանակով ժողովրդական ատենակալներ 15 մինչև 50 հոգի՝ նայած գյուղի ընակչության թվով։ Ընտրության ժամանակ հարկավոր ե առանձին ուշադրություն դարձնել, վորպեսզի գյուղդատարանի համար ժողատենակալներ ընտրվեն չքավոր, բատրակ ու միջակ ակտիվ աշխատավոր գյուղացիներ և գեղջկունիներ, վորոնք

ընդունակ լինեն պաշտպանելու աշխատավորների շահերը կուլակային և դասակտրդալին խորթ տարրեցից:

5. Ժողովրդական ատենակալների ընթառությունը կարող ե բեկանել զյուղական խորհուրդը:

Գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովը ժողատենակալների ընտրության մասին արձանագրություն ե կազմում և ներկայացնում ե գյուղխորհրդին: Վերջինը, յեթե դտնում ե, վոր ժողատենակալների ընտրությունը սիալ ե կատարված, կարող ե բեկանել այդ ընտրությունը: Որինակ՝ յեթե ատենակալների ցուցակի մեջ մտցված են այնպիսի անձինք, վորոնք ըստ որենքի չելին կարող լինել, կամ ժողատենակալների ընտրությունը կատարող ընդհանուր ժողովում ներկա չեն յեղել որինասահման թվով ընտրական իրավունք ունեցող անձեր, (առնվազն $35^{\circ}/_0$ ը) և այլն:

Այդ բոլոր դեպքերում գյուղխորհուրդը, բեկանելով ժողատենակալների ընտրությունը, առաջարկում ե գյուղի գյուղացիների ընդհանուր ժողովին վերընտրություն կատարել, պահպանելով որենքի բոլոր պահանջները:

6. Ժողովրդական ատենակալները զյուղական դատարանի նիստերին մասնակցում են զյուղական դատարանի սահմանած հերթի կարգով:

Գյուղդատարանը, ստանուլով քաղաքացիների ընդհանուր ժողովում ընտրված ժողատենակալների ընդհանուր ցուցակը 15 մինչև 50 հոգի, վորոշում ե, թե ատենակալները ինչ հերթականությամբ պիտի մասնակցեն գլուղդատարանի նիստերին։ Ավելի նպատակահարմար եկազմել ատենակալների այբբենական ցուցակ։

Հետեւալ լուրաքանչյուր նիստին հրավիրվում են յերկու նոր ատենակալներ, վորոնք դրանից առաջ նիստերին չեն մասնակցել։ Յերբ այդպիսով ատենակալների ամբողջ ցուցակը ըստառվում ե, նորից նույն այբբենական ցուցակով ժողատենակալները աշխատանքի լեն հրավիրվում հերթի կարգով։

Ինչպես մենք վերեռում հիշեցինք, գյուղդատարանի անդամները — գյուղդատավորը և ժողատենակալները ընտրվում են մեկ տարի ժամանակով։ Բայց կարող են լինել դեպքեր, յերբ նտախագահը կամ նրա տեղակալը կամ ժողատենակալներից վորեն մեկը մինչև այդ ժամանակը լրանալը կատարեն այնպիսի արարքներ, վորոնք վարկաբեկում են նրանց, վորպես դատարանի անդամների։ Նման դեպքերում գյուղխորհրդին կամ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովին իրավունք ե վերապահվում հետ կանչել այդպիսի գյուղդատարանի անդամներին, այսինքն՝

Նրանց զրկել ժողատենակալ լինելու իրավունքից և նրանց փոխարեն ընտրել ուրիշներին:

Առհասարակ պետք ե ընդդեմ, վոր դատարանի կազմը պիտի լինի կայուն։ դատարանի դասակարգային դերը և նշանակությունը շատ մեծ ե խորհրդական արդարադատության ասպարիզում, և վորքան ակտիվ լինեն դյուդիսորհրդի անդամները, մասնավորապես առենակալները, այնքան ավելի մեծ չափով կարելի կլինի դատարանը մոտեցնել մասսաներին և վերացնել դատավարության հետ կապված ձգձգումները։

7. Գյուղական դատավորը յեկ ժողովրդական ատենակալները վոչ մի վարձաւրություն չեն ստանում։ Գյուղական դատարանը ոգտվում գյուղական խորհրդի ապահանից։

Գյուղդատավորի և ժողատենակալների պարտականություն կատարելը հասարակական աշխատանք ե գյուղական միջավայրում, վորից խուսափելու իրավունք չունի վոչ մի այլատավոր։ Այս պատճառով ել այդ աշխատանք չի վարձատրվում։

Գյուղդատարանը առօննձին զրասենյակ չունի և ողտվում ե գյուղիսորհրդի արամագրության տակ գտնվող գրասենյակային աշխատողներից։ Դյուդիսորհուրդը պարտավոր ե ամեն կերպ աջակցել և հարմարություններ տալ գյուղդատա-

բանին, վորպեսզի նրա աշխատանքները ընթանանան առանց արգելքի ու ընդհատումների:

Գ Լ Ո Ւ Խ Ա Հ

Ի Ր Ա Վ Ա Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

8. Գյուղական դատարանը բննում է այն ժաղացիական վեճերը, վորոնց գինը 25 ո. ավելի չե, յերբ կողմեր են հանդիսանում մասնավորապես ժաղամացիները կամ հասարակական կազմակերպությունները (կոռպերատիվ, փոխոգկոմներ յեւ այլի):

Գյուղական դատարանը բննում է նայել բարեակային գործերը մինչեւ 20 ո. սահմաններում, բացի կուլակային տնտեսություններում ծագող այն գործերից, վորոնց վերաբերմասք լիրարկվում է աշխատանքային Որենսգիրքը:

ԾԱՆՈԲՈՒԹՈՒՆ.—Գյուղական դատարանը

չի կարող քննել այն քաղաքացիական վեճերը, վորտեղ կողմ են հանդիսանում պետական հիմնարկներն ու ձեռնարկությունները, ինչպես նաև ապրուստի միջոցի (ալիմենտ) վերաբերյալ գործերը:

Այս հոգվածներով սահմանվում է գյուղգատարաններին յենթակա քաղաքացիական գործերի քննության շրջանակը: Վորպես ընդհանուր կտնոն, գյուղգատարանները քննում են մինչև

3898

A



ԿԵՍՏՐՈՒԱԿԱՅԱ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ

25 ռ. արժեք ունեցող բաղաքացիական գործերը:

Քաղաքացիական գործ ասելով պետք է հասկանալ այնովիսի վեճ, վոր բղխում ե վորոշ քաղաքացիական փոխ հարաբերությունից. որինակ յեթե մի գյուղացի մյուսին ծախել ե մի գառ 10 ռուբլով և նրա արժեքը այս կամ այն պատճառով չի կարողանում ստանալ գնորդից, ապա նրանց միջև ծագած վեճը քաղաքացիական վեճ ե և յենթակա լի գյուղատարանի քննության:

Քաղաքացիական վեճերը կարող են տեղի ունենալ վոչ միայն առանձին գյուղացիների, այլև վերջինների և հասարակական կազմակերպությունների միջև։ Որինակ՝ յեթե մի գյուղացի փոխողկոմից փոխարինաբար վերցրել ե սերմացու 25 ռ. գումարի սահմաններում և արժեքը չի վճարում կամ սերմացուն չի վերադարձնում, ապա գյուղացու կամ փոխողկոմի միջև ծագած վեճը դարձյալ բաղաքացիական վեճ ե և յենթակա յե գյուղատարանի իրավասության:

Քաղաքացիական վեճերը կարող են տեղի ունենալ և հասարակական կազմակերպությունների միջև (կոոպերատիվ, փոխողկոմ, մելիորատիվ, գյուղատնտեսական, այգեգործական և այլ ընկերություններ), և յեթե այդ վեճերի դինը 25 ռ. ավելի չե, — ապա այդ վեճերում գործը ըննում ե գյուղատարանը:

Գյուղգատարանի քննության լենթակա յեն նաև բատրակալին զործերը մինչև 20 ո. սահմաններում, բացի այն գործերից, վորոնք ծագում են կուլտակային տնտեսություններում, և վորոնց վերաշերմամբ կիրարկվում է Ախտառնքային Որենսգիրքը:

Պարզենք այդ: Որենքը սահմանում է, վոր պլուղգատարանի քննության լենթակա յեն վոչ թե բոլոր բատրակային զործերը, այլ նրանց միայն մի ժամը, և այդ հասկանալի յեւ, Բատրակիների շահերը պաշտպանելու համար խորհըրդային իշխանությունը հրատարակել և հատուել որենք, վորը կոչվում ե «Ժամանակավոր կանոններ պլուղգացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրառելու ոչայմանների ժամին»: Այդ որենքի ներդործությունը տարածվում և թե աշխատավորական ոգտագործության շնչապատկան հողերում և թե վարձակալական հողերում գտնվող տնտեսությունների վրա: Այդ բոլոր տնտեսություններում բատրակների ու բատրակունիների վարձու աշխատանքը, անկախ վարձման ժամանակամիջոցից (վորոշ ժամանակով, մշտական, սեզոնալին), համարվում ե ոժանդակ՝ ընտանիքի բանվորական ուժի նկատմամբ: Այդ նշանակում ե, վոր տվյալ տընտեսության մեջ ապբող՝ ընտանիքի բորոք աշ-

խատունակ անդամները բատրակ վարձելու դեպքում իրենց ևս պարտավոր են անձամբ աշխատելու իրենց տնտեսությունների մեջ։ Հենց արդպիսի տնտեսություններում աշխատող բատրակների շահերն ել պաշտպանում ե վերոհիշյալ որենքը («Փամանակավոր կանոնները»)։ Գլուղդատարանը քննում է հիշյալ տնտեսություններում ծագող բատրակների աշխատավարձի վերաբերյալ դործերը մինչև 20 ռ. սահմաններում։ Որինակ, յեթե բատրակը աշխատել է մի տնտեսությունում և իր աշխատավարձը մինչև 20 ռ. այս կամ այն պատճառով չի կարողանում ստանալ, ապա նա կարող է դիմել գյուղդատարանին և պահանջել վարձողից իր աշխատավարձը։ Նման բոլոր դեպքերում գյուղդատարանը քննության և առնում բատրակների աշխատավարձի վերաբերյալ բոլոր դործերը։

Իսկ յեթե բատրակը աշխատել է կուլակալին տնտեսությունում և իր աշխատավարձը թեկուղ մինչև 20 ռուբլու սահմաններում չի ստացել, ապա նա իր պահանջը կուլակից անում և վոչ թե գյուղդատարանում, այլ ժողդատարանում։ Ինչնիվ բացատրել վոր այդ կուլակալին տնտեսությունների վրա չեն տարածվում վերոհիշյալ «Փամանակավոր կանոնները»։ Այդ տնտեսությունների վերաբերյալ կիրարկվում ե

Աշխատանքի Որենսգիրքը, իսկ այդ Որենսգիրքը
բարդ որենսգիրք եւ կան շատ վորոշումներ, հրա-
հանգներ, վորոնք վերաբերում են Աշխատանքի
Որենսգրքի այս կամ այն հողվածի պարզաբա-
նությանը. գլուղդատարանը ձեռնհաս, և իվի-
ճակի չե, այդ բոլոր որենքները իմանալ և պատ-
շաճ կերպով պաշտպանել բատրակների շահերը
այն դեպքերում, յերբ նրանք աշխատել են կու-
լակային տնտեսություններում և այս կամ այն
պատճառով աշխատավարձը լիովին չին ստացել:
Նման դեպքերում ժողդատարանն ե քննում
բատրակների գործերը և պաշտպանում նրանց
շահերը:

Դյուղական դատարանը չի կարող քննել
նաև ապրուստի միջոցի վերաբերյալ գործերը.
որինակ, յեթե կինը իր մարդուց հեռանալուց
հետո ցանկանում ե նրանից ապրուստի միջոց
(ալիմենտ) ստանալ թե իր և թե յերեխայի
համար, — այդ բոլոր դեպքերում պահանջը պետք
ե ներկայացվի ժողդատարանին. Դյուղդատա-
րանը չի կարող քննել նաև այնպիսի քաղաքա-
ցիական վեճերը, վորոնք ուղղված են պետա-
կան հիմնարկությունների ու ձեռարկություն-
ների դեմ կամ ծագել այդ հիմնարկությունների
ու ձեռնարկությունների կամ վեց ջինների ու
մասնավոր անձերի միջնեւ:

Հիշյալ գործերը, վորպես ավելի բարդ բնույթի գործեր, լենթակա լեն ժողովրդական դատարանին:

9. զյուղական դատարանը հնուու և նետիյալ քեյական գործերը.

ա) բանավոր, գրավոր կամ գործողությամբ փրատարանի հասցնելու մասին.

բ) առանց մարմնական վճառվածք պահանջելու հարվածներ հասցնելու մասին.

գ) դիտավորյալ ապորինի արածացման մասին, մինչեւ 25 ոութի գումարի սահմաններում:

դ) մանը գողության մասին՝ 25 ոութ. վոչ ավելի գումարի սահմաններու յերե կատաված և առանց վորեվե սեխնիկական միջոցի գործադրության, առաջին անգամ յեվ առանց այլ անձանց հետ նախապես համաձայնության գալու:

Անասունների գողության գործերը զյուղական դատարանի հնուության լենթակա չեն:

ՍԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ՔՐԵԼԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԻԿԱՐՈՂ ՀԱՐՈՒՑՎԵԼ ԱՅՆ ՊԵՂՓԻՐՈՒՄ, յԵՐՔ ԱՐԱՐՔԸ ԿԱՄԱՐԵԼՈՒ ՊԱհԻց անցել և վեց ամսից ավելի:

Այս հոդվածով վորոշվում ե, թե քրելական ինչ գործեր են յենթակա դյուղատարանի քընության:

Վիրավորանքը կարող ե լինել խոսքով, դրավոր կամ դործողությամբ։ Խոսքով վիրավորանք ասելով հասկացվում ե այն, վոր մեկը մի ուրիշին նրա ներկաւությամբ կամ բացակայությամբ հայիոցում ե (մայր, հայր, ծնող և այլն) կամ վիրավորական խոսքեր ե ասում նրան, ինչպես որինտէ՝ շինովնիկ, ապուշ, բյուրոկրատ, լիր, անվորդի, զուռուժսուղ, պոռնիկ և այլն։

Խոսքով վիրավորանքը կարող ե լինել նաև զրավոր, յերբ հայիոյանքը կամ վիրավորական բառը գործ ե ածվում նամակի, տոմսի մեջ և այլն։

Դործողությամբ հասցվող վիրավորանքն այն ին, յերբ մեկը մի ուրիշին վիրավորում ե նրա մարմնին զիազելով, բայց առանց մարմնական վնաս պատճառելու։ որինտէ՝ մօրուքն ե բռնում, ջուր կամ կեղաստություն ե թափում մեկի վրա, գլխարկը զվիսից ցած ե դցում, թըքում ե յերեսին և այլն։ Այս կարգի վիրավորանք են համարվում նաև այն անպատկառ արարքները, յերբ մեկը մյուսին իր մարմնի անպատշաճ մասերն ե ցույց տալիս և այլն։ Ծեծ ասելով պետք ե հասկանալ զորեւ մեկին հարվածներ հասցնելը։ Հարվածը կարելի յե հասցնել ձեռքով, վոտքով, փայտով, մարակով և այլն։

Ծեծի վերաբերյալ դործերը քննում ե գյուղ-

դատարանը միայն այն դեպքում, լեռք ծեծը միայն
մարմնական ցավ ե պատճառում առանց մի վորես
մշասվածքի, իսկ յեթե ծեծը մարմնական մշաս-
վածք ե պատճառում, վորի հետևանքն ելինում
տուժողի առողջության քայլայումը, որինակ,
գլուխը կոտրվում, արլուն ե գալիս, վոտքը կամ
ձեռքն ե կոտրվում, աչքն ե կուրանում, կամ
ծեծի ժամանակ տուժողին լենթարկում են տան-
ջանքի, կամ այնպես սաստիկ են ծեծում, վոր
ծեծվողը հիվանդանում ե, անկողին ե ընկնում
և ալին, այդ դեպքերում գործը լենթակա յե
ժողդատարանի քննության:

Բացի վերոհիշյալ գործերից գյուղդատա-
րանը քննում ե նաև դիտավորյալ ապօրինի տ-
րածցման գործերը մինչև 25 ոռւբլի և մանր
գողության վերաբերյալ գործերը դարձյալ մինչև
25 ոռւբլի արժողությամբ:

Որինակ՝ լեթե մեկը դիտավորյալ կերպով
(ապօրինաբար) իր վոչխարները, կովերը, յեզ-
ները և ալ անասուններ գցում ե ուրիշի արտը
բանջարանոցը, խոտատեղը և ալին, արածացնելու
համար և այդպիսով մշաս ե հասցնում տիրոջը,
և լեթե մշասի չափը 25 ոռւբլուց ավելի չե,
ապա գործը լենթակա յե գյուղդատարանի քննու-
թյան:

Տուժողը կարող ե իր արտը, բանջարանոցը,

խոտատեղը փչացնողի դեմ գյուղղատարանում
գործ սկսել թե քրեւական և թե քաղաքացիա-
կան կարգով ինչպես առանձին, այնպես ել միա-
ժամանակ։ Քրեւական կարգով նա կարող ե պա-
հանջել գյուղղատարանից, վոր արտը, բանջա-
րանոցը, խոտատեղը փչացնողին յենթարկեն
քրեւական պատասխանատվության, քաղաքացիա-
կան կարգով նա կարող ե պահանջել իր զնաս-
ների հատուցում։

Ինչ վերաբերում ե մանր գողության դեպ-
քերին մինչև 25 ոռուբլի գումարի սահմաններում,
ապա այստեղ հարկավոր ե ընդգծել հետևյալը. —
մանր (հասարակ) գողություն ասելով պետք ե
հասկանալ այնպիսի գործողությունն, լերը մեկը
գաղտնի կերպով հափշտակում ե ուրիշին պատ-
կանող կամ նրա ոգտագործության տակ գըտ-
նըվող մի վորեն իր, առանց, տեխնիկական մի-
ջոցներ գործազրելու։

Որինակ՝ լեթե մեկը մտնում ե իր հարեանի
բոստանը և գաղտնի կերպով հափշտակում ե
ձմերուկ կամ յեմիշ, կամ ալգուց գողանում ե
հարեանի բահը, կամ կացին, ապա այդ հասա-
րակ գողություն ե և յենթակա յե գյուղղատա-
րանի քննության, լեթե գողացած իրի կամ իրերի
արժեքը 25 ոռուբլուց ավելի չե, և գողությունը
առաջին անգամն ե տեղի ունեցել. հակառակ

դեպքում գործը քննում և ժողովարանը: Բայց
յեթե կտցինը, բահը և այլն պահված են յեզել
ծածկված շենքում և այդ իրերը հափշտակելու
համար գործադրվել եւ տեխնիկական միջոց (շենքի
դռւուր բաց և արվել հասուկ պատրաստված քա-
նալիով, կամ դռւուր կամ լուսամուտը կոտրել
են կացնով և այլն), և այդ գործողությունը
կատարվել եւ մեկի կամ միքանի անձերի կող-
մից, նուխապես իրար հետ համաձայնության
գոլով,— այդ հասարակ գողություն չե, այլ վո-
րակալ գողություն և անկախ գողացած իրերի
արժեքից, յենթակա յեւ ժողովարանի քննու-
թյան:

Գյուղղատարանը չի կարող քննել անասուն-
ների գողության վերաբերյալ գործեր, յեթե
նույնիսկ գողացած անասունի արժեքը 25 ռուբ-
լուց ավելի չե. Որենքը, սահմանելով այդպիսի
կանոն, նկատի յեւ ունեցել այն նշանակությունը,
վոր ունեն անասունները գյուղում՝ տնտեսու-
թյան համար: Անասունների գողությունը ան-
պայման անդրադառնում եւ գյուղացու տնտե-
սության վրա: Նման գործերի քննությունը
հանձնված է ժողովարաններին, վորոնք ավելի
մեծ հնարավորություն ունեն ողակարելու արդ
չարիքի գեմ, քան զյուղղատարանները: Ժողովա-
րանները անասուններ գողացուների նկատ-

մամբ կիրարնելով ավելի խիստ սոցիալական պաշտպանության միջոց, այսինքն՝ ազատությունից դրկելով, արդպիսով նրանց ժամանակավորապես չեղոքացնում, հեռացնում են հասարակությունից՝ դաստիարակելու համար։

Այս հոգվածի ծանոթությամբ քրեյական գործերի համար սահմանվում ե վաղեմություն և ամսից վոչ ավելի ժամանակով։ Այդ նշանակում և հետեւյալը, — յիթե մեկը որենքով նախատեսված դեպքերում (հոդ. 9) ցանկանում ե քրեական գործ հարուցել զյուղատարանում, ապա նա կարող է այդ կտաաըել և ամսվա ընթացքում, հաշվոծ այն ազանից, յերբ արարքը (վիրավորանքը, ծեծը, ապօրինի արածացում և գողությունը) տեղի է ունեցել, հակառակ պարագային քրեական գործ։ Հի կարող հարուցվել։ Այդ ուրված և այն նկատություններ, վարպետի արարքը տեղի ունենալուց շատ ուշ պահպատ չարփի, բանի վոր և աւսից հետո արգեն պատարանի համար դժվար կլինի վաղուց կատարված դեպքը մանրամասն չննել և իրողաւթյունը յերեան հաներ։

10. Քենական գործերի վերաբերմամբ զյուղական դատարանը կիրարելում ե հետեւյալ միջոցներից մեկն ու մեկը։ —

ա) հարկադիր աւխատանիներ մինչեւ յերկու շաբաթ ժամանակով։

բ) դրամական տուգանք մինչեվ 25 ռուբլի հոգուտ տեղական բյուջեյի.

գ) հասարակական պարսավանք մասուլում հրապարակելով կամ տուանց դրան:

դ) նախազգութեացում:

Այդ բոլոր միջոցներից համեմատաբար խիստ միջոցներ են հարկադիր աշխատանքները և դրամական տուգանքը:

Թե աքդյոք ինչ հարկադիր հաշխատանքներ պիտի կատարե մեղադրյալը, — այս հարցը ամեն անդամ լուծում ե գյուղխորհուրդը, յերբ ստանում ե գյուղդատարանի վորոշման պատճենը: Առհասսարակ պիտի ասել, վոր հարկադիր աշխատանքները պետք ե հանրովուտ բնույթ ունենան և կատարվեն գյուղի հասարակության համար. որինակ՝ կամուրջների, հիվանդանոցների, դպրոցների, ճանապարհների, մանկատների, գյուղատնտեսուկան և անասնաբուժական կայանների, խրճիթ ընթերցարանների կառուցման ու նորոգությունը հանրովուտ հասարակուկան աշխատանք ե:

Հարց ե ծագում, թե հարկադիր աշխատանքներին դատավարտվածները վարձատրություն ստանամ են աքդյոք իրենց կատարած աշխատանքների համար:

Վորպես ընդհանուր կանոն, հարկադիր աշ-

խառանքները ձրիաբար են կատարվում այն
բոլոր անձանց կողմից, վորոնք մինչև դատա-
պարտվելը վտրնու աշխատանի չեն կատարել.
բացառություններ կարող են տեղի ունենալ
միայն այն դեպքերում, եթե նրանք ապրուստի
վորոնե միջոց չունեն, և այդ հանգամանքը հիշա-
տակվում ե գլուղդատարանի վորոշման մեջ:
Նման դեպքերում հարկադիր աշխատանքներին
դատապարտվածները ստանում են աշխատավարձ
պետական նվազագույն նորմայի սահմաններում.
բայց ի՞նչ ե աշխատավարձի պետական նվազա-
գույն չափը (մինիմումը):

Պետությունը աշխատավորների շահերի
ոլորտանության համար սահմանում ե աշխա-
տավարձի վորոշ չափ, վորը պարտադիր ե բոլոր
վարձակալների համար և վորից պակաս վարձա-
տրություն վոչ վոք իրավունք չունի վճարելու:
Աշխատավարձի այդ նվազագույն չափը ամեն
ամիս հայտարարվում ե Աշխատավարտի կողմից
և կազմում ե աշխատավարձի պետական մինի-
մումը: Գլուղդատարանը հարկ լեղած դեպքում
կարող ե աշխատավարձի պետական նվազագույն
չափի վերաբերյալ բոլոր տեղեկությունները պա-
հանջել աշխատանքի անսուչներից:

Ինչ վերաբերում ե այն անձանց, վորոնք
կատարելով վարձու աշխատանք դատապարտ-

վում են հարկադիր աշխատանքների, ապա նը-
րանք այդ աշխատանքները կատարում են իրենց
աշխատանքի կամ ծառայության վայրում և ըս-
տանում են իրենց աշխատավարձի այն մասը,
վորը հավասար ե տվյալ վայրում սահմանված
աշխատավարձի պետական նվազագույն չափին
(մինիմումի):

Նրանց աշխատավարձի մնացած ամբողջ գու-
մարը անցնում ե հարկադիր աշխատանքներ կար-
դավորող առանձին մարմնի տրամադրության
տակ: Վորը կոչվում ե բյուրո- գյուղական վայ-
րերում այդ բյուրոյի պարտականությունները
դրված ե գյուղխորհուրդների վրա:

Հարկադիր աշխատանքների դատապարտ-
վածները սկսի պարտաճանաչ կերպով կատա-
րեն իրենց հանձնված աշխատանքները: Բայց,
յեթե նրանք խուսափում են, անփութ կերպով
են աշխատում կամ աշխատանքների համար
հատկացված գործիքներն ունյութերը փչացնում
են, այդ դեպքերում գյուղխորհուրդներին իրա-
վունք և վերապահվում նրանց ավելի ծանր աշ-
խատանքներ առկռ և անփութորեն աշխատած
ժամանակը կամ բացակայած որերը չհաշվելու
հարկադիր աշխատանքների ժամանակամիջոցի
դիմաց:

Հարկադիր աշխատանքները չեն կարող կի-

բարկվել հիվանդ անձանց և ծերերի նկատմամբ,
նրանց վերաբերմամբ գյուղղատարանը այլ մի-
ջոցներ ե կիրարկում։

Դրամական տուգանք նշանակելիս գյուղղա-
տարանը սիրտի նկատի առնի, թե արդյմք մե-
ղադրտալը նյութական հնարավորություն ունի
ճարելու այդ տուգանքը, թե վոչ, և արդյոք
տուգանքը զգալի չափով չի ֆնասի նրա անտե-
սությանը։

Դանձված տուգանքները հատկացվում են
հոգուտ տեղական բլուջելի, այսինքն՝ հոգուտ
գյուղխորհրդի բլուջելի, յեթե արդարիսի բլուջե-
լա, հակառակ դեպքում՝ հոգուտ շրջանալին
բլուջելի։

Հասարակական պարսավանքն այն է, վոր
գյուղղատարանը դատական դռնբաց նիստում
հայտարարում ե, վոր այսինչ քաղաքացին կա-
տարել ե այսինչ անվայել արարքը։ Իր վորոշումը
գյուղղատարանը կարող ե հայտնել և գյուղի
քաղաքացիների ընդհանուր ժողովում։ Գյուղղա-
տարանը իր վորոշումը կարող ե նաև հայտա-
րարել մամուլում։ Մամուլ ասելով սկսաք ե հաս-
կանալ, ինչպես պաշտոնական թերթերը, որինակ
«Խորհրդային Հայաստան» «Մանկալ» և այլն,
նույնպես և պատի թերթերը։ Գյուղղատարանին
■ ■ երաղանգաւմ ամեն անգամ վորոշել, թե նը-

պատականարմաքության տեսակետից արդյոք հասարակական պարսավանքը հարկավոր և հայտաբարել մամուլում թե վոչ:

Նախազգուշացումը բոլոր վերոհիշյալ միջոցներից ամենից թույլ միջացն եւ իրադործվում ե նրանով, վոր գյուղդատարանը իր վորոշումով նախազգուշացնում ե մեղաղը լալին իր արարքի համար, վորպեսզի այլևս այդ արարքը չկրկնվի:

Որինակ մի անգրագետ գյուղացի, հասարակական ժողովում հայնոյում ե ուրիշ գյուղացու այն բանի համար, վոր վերջինը չի ուզում մասնակցել գյուղում դալրոց կառուցելու գործին: Վիրավօրված գյուղացին գյուղդատարանում գործ ե սկսում իրեն ժողովում հայնոյողի դեմ: Գյուղդատարանը նման գեղքերում, նկատի առնելով այն հանգամանքը, վոր մեղաղը յալը գիտակից (կուլտուրական) չե, վոր նա հայնոյելով իր համագյուղացուն՝ միենույն ժամանակ դրանով անպատշաճ վերաբերմունք ե ցուց տվել վոչ միայն նրան, այլև բոլոր ժողովականներին, և վոր մեղաղը յալը գիտակից (կուլտորական) լինելու դեպքում այդ արարքը չի կատարի, չի կարող այլ վորոշում կարացնել՝ քան նախազգուշացումը, վորպես մի ճիշտ և նպատակահարմար միջոց: Այսաեղ ակտը ե ընդգծել, վոր նախազգուշացումը, վորպես ներգործության միջոց

կիրարկվում և առհասարակ գյուղատարանի կողմից այն դեպքերում, լեռը մեղաղբալը կատարելով այս կամ այն արարքը իրեն հաշիվ չի տալիս իր զործողության համար, և շնորհիվ այդ հանգամանքի արարքը պատահական բնույթ և կրում:

Առհասարակ պետք և նկատել, վոր գյուղատարանի կողմից կիրարկվող բոլոր միջոցները (հարկադիր աշխատանքներ, տուգանք, հասարակական պարսականք և նախազգուշացում) դաստիարակչական միջոցներ են. գյուղդատարանները անմիջապես շփովելով մասսաների հետ, պիտի կարողանան իրենց դատական ուղղիչ միջոցներով ազդել գյուղացիության վրա, նենց սրանով ել ոլիտի արտահայտվի գյուղդատարանի զործունեության դրական կողմը քրեական գործեր քննելիս:

11. Կանոնադրության 8 յեկ 9 հոդվածներում մատնանշված գործերը գյուղական դատարանը բննում և հետեւյալ կարգով.—

Ա. Քաղաքացիական գործերը բննում և այն գյուղական դատարանը, վորի շրջանում մետաղես ապրում և կամ մետաղես գրադանոնք ունի դատակիրը (պատախանողը)

Բ. Քրեական գործը բննում և այն գյուղական դատարանը, վորի սահմաններում տեղի յեւնեցել արարք:

Ամեն մի գործում լինում են լերկու կողմէ:
Քաղաքացիական գործերում լինում են պահանջատեր (հայցվոր), այսինքն այն անձը, վորը մի ուրիշից պահանջ ե անում, և դատակիրը (պատասխանողը), այսինքն այն անձը, վորից մի ուրիշը պահանջ ե անում:

Քրեական գործերում լինում են՝ տուժող, այսինքն՝ այն անձը, վորին ծեծել, վիրավորել կամ վորից մի բան են գողացել և մեղադրյալ, այսինքն այն անձը, վորը մեղադրվում ե հիշյալ արարքների մեջ:

Քաղաքացիական գործերը քննում ե այն գյուղատարանը, վորի վայրում առլում կամ մշտական զբաղմունք ունի պատոսխանողը։ Ուրինակ, յեթե մեկը վերցըել ե մի ուրիշի արորը (չութը) և բոլորովին փչացըել ե կամ չի ուղղում վերադարձնել, նրա դիմ՝ քաղաքացիական գործ կարելի յե սկսել այն գյուղատարանում, վորի շրջանում նա ապրում կամ մշտական զբաղմունք ունի և յերբ արորի դիմը 25 ուորուց ավելի չե. հակառակ պարագային գործը քննում ե ժողովատարանը։

— Քաղաքացիական պահանջներ կարելի յե ներկայացնել գյուղատարանին պատոսխանողի բնակավայրում կամ նրա զբաղմունքների վայրում և այլ գեղքերում, յերբ որինակ, մեկը

մյուսից ցորեն և վերցրել, բայց չի վերադարձնում, փող և պարտք արել և ժամանակը լրանալուց հետո չի տալիս պարտքը և այլն, յեթե այդ բոլոր դեպքերում պահանջի գումարը 25 ռուբլուց ավելի չե.

Ինչ վերաբերում և քրեական գործերին ազա այդ գործերը քննում և այն գյուղդատարանը, վորի վայրում տեղի լե ունեցել արարքը:

Որինակ, յեթե նորագավիթցի Աբրահամյանը Փարաքար գյուղում կովել է Վարմազյարցի Մարտիրոսյանի հետ, ազա նրանց գործը քննում և վոչ թե Նորագավիթի կամ Վարմազյարի գյուղդատարանը, այլ Փարաքարի գյուղդատարանը:

12. Յերե գյուղական դատարանը գտնում է, վոր գործն իր իրավասության յենթակա չե, գործն ուղարկում և համապատասխան գյուղական կամ ժողովրդական դատարանին յեկ այս մասին հայտնում և կողմերին.

Գյուղդատարանը պիտի քննի միայն այնպիսի քաղաքացիական գործեր, վորոնք վերաբերում են նրա իրավասության, վորպես ընդհանուր կանոն, որննքը սահմանում ե, վոր գյուղդատարանը քննում և քաղաքացիական պահանջները մինչև 25 ռուբլի գումարի սահմաններում: Բայց յեթե գյուղդատարանի նախագահը կամ նրա տեղակալը դյուղի քաղաքացիներից

հայտարարություններ ընդունելիս նկատում ե, վոր պահանջվող դումարը քաղաքացիական գործերի նկատմամբ 25 ռ. ավելի լե, այդ դեպքերում նրանք բացատրում են դիմում տվողին, վոր նա պետք ե դիմի ժողղատարան:

Բայց կարող են լինել նաև այնպիսի դեպքեր, յերբ քաղաքացիական պահանջի գումարը 25 ռուբլուց ավելի չլինի, բայց վարձատրություն պահանջվի աշխալիսի գործողության համար, վորը որենքի պաշտպանությունը չի վայելում, վորպես սոցիալառես ֆաստակար գործողությունն Ուրինակ, յեթե մի քահանա գյուղում մկրտում ե մի գյուղացու յերեխայի և չստանալով այդ կը ունական ծեսը կատարելու համար պայմանավորված վարձատրությունը՝ 15 ռուբլին, զիմում և գյուղղատարանին համապատասխան պահանջով, դատարանը պարտավոր ե այդպիսի գործի դատաքննությունը կարճել այն նկատմառումով, վոր կրոնական ծես կատարելու համար վարձատրությանն պահանջելը որինական չե և հակառակ պրոլետարական աշխարհականոցողության:

Ինչ վերաբերում ե գյուղղատարանի իրավասությանը քրեական գործերի նկատմամբ, ապա այսուեղ պետք ե ընդգծել, վոր գյուղղատարանի իրավասության լինթակա քրեական գործերի ցուցակը մանրամասնորեն մասնանշ-

ված և այս որենքի 8 հոդ. պարզաբանության մեջ՝ Յեթե այս կամ այն քընկան գործը գյուղատարանի քննության յենթակա գործ չե, ապա վերջինը պարտավոր և գործը իր մոտ կարճել և անժիշտապես ուղարկել համապատասխան ժողղառարանին։

Դ. Ը Ն Ի Խ III

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ (ՆԱԽԱԳԱՀԻ) ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

13. Գյուղական դատավորը յեվ ժողովրդական ատենակալները չեն կարող մասնակցել գործի բնօւրիչյանը, յերե նրանք ուղղակի կամ անուղակի կերպով տահագրուված են գործի յելքով կամ կողմերի նետ ազգակցական կամ խնամիական կապեր ունեն կամ առանձին հարաբերության մեջ են։

14. Այս կանոնադրության 13 հոդ. մասնաւում առիթները յեղած դեպքում դատավորը կամ ժողովրդական ատենակալները իրենք պետք է նրամարփեն գործին մասնակցելուց. այս դեպքում գյուղական դատավորին փոխարինում է նրա տեղակալը, իսկ ժողովրդական ատենակալներին՝ մյուս ժողովրդական ատենակալները ներթի կարգով։

15. Քաղաքացիական գարծերում կողմերը (հայցվոր յեկ դատակիր), իսկ քեսական գործերում տուժողը յեկ մեղադրյալը իրավունք ունի մերժում հայտնելու թե զյուղական դատավորի (նախագահի յեկ թե ժողովրդական առենակալների) դեմ:

16. Պատճառաբանված մերժումը նպայտնվում է դատական նիստը բանալիս յեկ բննվում և գործին մասնակցող դատավորների կողմից, մերժվող անդամի բացակայությամբ։ Զայների հավասարության դեպքում զյուղական դատարանի տվյալ անդամը համարվում է մերժված։

Գործը անաշառ կերպով քննելու նպատակով որենքը թույլ չի տալիս զյուղխորհրդի անդամին, լինի նա գյուղական դատավորը—նախագահ կամ նրա տեղակալը, կամ թե ժողատենակալը, մասնակցել գործի քննությանը այն դեպքերում, յերբ նրանք ուղղակի կամ անուղղակի կերպով շահագրոված են գործի լիւրով, արսինքըն՝ կողմերից վորևե մեկի ազգականն են կամ ինտերին եւ ուղում են, վոր գործը վճռվի հոգուտ այս կամ այն կողմին։ Այս դեպքում նախագահին վորխարինում եւ տեղակալը, տեղակալին նախագահը, իսկ ժողատենակալին ուրիշ ժողատենակալ ըստ ցուցակին

Այս հանդամանքները գործը անաշառ կեր-

պով քննելու տեսակետից չափազանց կարևոր են,
ուստի որենքը կտրուկ կերպով պահանջում է,
վորպեսզի այդպիսի դեպքերում գլուղդատարա-
նի անդամը ինքը հեռանա դործին մասնակցե-
լուց։ Հակառակ պարագային որենքը թույլ է
տալիս գործին մասնակցող շահագրգոված կող-
մին համապատասխան հայտարարություն անել
(մերժում) գլուղդատարանին, վորպեսզի այս կամ
այն անդամը հեռացվի։ Կողմի այդ հայտարա-
րությունը քննում են գյուղդատարանի՝ զործին
մասնակցող մյուս անդամները, բացի այն ան-
դամից, վորին վերաբերում եւ այդ հայտարարու-
թյունը։ Յեթե գյուղդատարանի կազմից վորեե
անդամի հեռացնելու հարցը քննելիս գյուղդա-
տարանի մեկ անդամը հակառակ եւ այդ անդա-
մին հեռացնելուն, իսկ մյուսը, ընդհակառակը,
դանում է, վոր հարկավոր եւ կողմի դիմումը
(մերժում, բացարկ) հարգել, հարցը լուծվում եւ
հոգուտ հայտարարություն անողի՝ այսինքն
գյուղդատարանի անդամը հեռացվում, և նրան
վոխորինում եւ ուրիշը վերելու հիշված կարգով։

Գ. Ա. Ռ. Խ. IV

ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՔՆԱՌԻԹՅՈՒՆԸ

17. Գյուղական դատարանում գործի դա-
տաբնուրյունը սկսվում է հայցվորի կամ տու-

ծողի բանավոր կամ գրավոր հայտարարությամբ:

ՆԱՆՈԹ. — Գողուրյան վերաբերյալ գործերը կարող են սկսվել նայել պատունյաների յեկ նիմ-նարկների գրուրյունների հիման վրա:

Գյուղդատարանում քաղաքացիական գոր-ծերի դատաքննությունը սկսվում ե հայցվորի (պահանջատիրոջ) գրավոր կամ բերանացի դիմու-մումի հիման վրա. Նույնը տեղի յե ունենում քրեական գործերի վերաբերմամբ այն զանազա-նությամբ միայն, վոր գրավոր կամ բերանացի դիմում տալիս ե տուժողը:

Գողության վերաբերյալ գործեր սկսելու իրավունքը որենքը վերապահում ե վոչ միայն տուժողին այլև այն պաշտոնյաներին ու հիմ-նարկներին, վորոնց հայտնի ե գողության դեպ-քը: Այս բացատրվում ե նրանով, վոր գողու-թյունը, վորպես հասարակական չարիք, հարկա-վոր ե ամեն կերպ հետապնդել: Կարող ե պա-տահել, վոր տուժողը այս կամ այն պատճառով չի ուզում գործ սկսել իր հարկանի դեմ, վոր գողացել ե նրա իրերը մինչև 25 ուուրլի արժողու-թյամբ:

Բայց, յեթե այդ գողության մասին հակտնի յե ալլ քաղաքացիներին, կամ ել պետական կամ հասարակական մարմիններին, ապա վերջիննե-րը հասարակական անդորրությունը պաշտպա-

նելու նպատակով համապատասխան դիմում են
տալիս գյուղատարանին գողին պատասխանա-
տվության լենթարկելու համար:

18. Հայտարարությունները տրվում են գյու-
ղական դատավորին կամ նրա տեղակալին.
բանավոր հայտարարությունը իսկույն Ացգվում
է արձանագրության մեջ:

ԾԱՆՈԹ. — Գյուղական դատավորին տրվող բոլոր
հայտարարությունները ազատվում են ա-
մեն տեսակ տուրքերից:

Բերանացի հայտարարությունը (դիմումը)
տրվում է գյուղական դատավորին կամ նրա
տեղակալին. այդ մասին կազմվում ե արձանա-
գրություն, վորի տակ ստոբագրում ե գյուղա-
տավորը կամ նրա տեղակալը, նաև թե ով ե
կազմում արձանագրությունը, նույնպես և դի-
մումը, յեթե նա գրագետ ե. հակառակ պարա-
գային գյուղատավորը կամ նրա տեղակալը այդ
մասին հիշտակում են արձանագրության մեջ:
Հենց այդպիսի դիմումսերն ել կազմում են թե
քաղաքացիական և թե քրեական դորժերը:

19. Գյուղական դատարանում ստացված
ամեն մի գործ պետք է լուծվի ստացվելուց հե-
տո մեկ շաբաթվա ընթացքում:

Գյուղատարանը խստորեն պիտի պահպա-
նի այն ժամանակամիջոցը և վոչ մի դեպքում

չպետք ե թույլ տու, վրը գլուղի քաղաքացիների դիմումներն առանց ընթացքի մնան դրասենյակում ամիսներով, շաբաթներով. այդ դեպքերը կարող են բացասական կերպով անդրադառնալ գլուղդատարանի վրա: Յերբեք չպետք ե մոռանալ, վոր գլուղդատարանը այն մասսայական մարմինն ե, վորն արագ կերպով պիտի պաշտպանի աշխատավոր գյուղացիների շահերը:

20. Գործը լսելու որվա մասին գյուղական դատարանում նայտարարություն ե կախվում, յեզ կողմերին ու վկաներին տեղեկություն ե ՏՐՎՈՒՄ գյուղխորհրդի (գյուղկայտարածուների) միջոցով:

Գործը լսելու որվա մասին կողմերին ժամանակին տեղեկացնելը կարևոր հանգամանք է, և գլուղդատարանը պիտի ժամանակին միջոցներ ձեռք առնի, վորպեսզի կողմերն ու վկաները ժամանակին ներկայանան դատարանին. հակառակ պարագային գործը կարող է ձգձգվել, իսկ այդ չպետք ե տեղի ունենա գյուղդատարանում, քանի վոր նրա գլխավոր նպատակն ե՝ արագացնել գործերի լուծումը և այսպիսով մասսաներին մոռեցնել դատարանին:

Ի՞նչ միջոցների պիտի դիմել կողմերին տեղյակ պահելու համար գործը լսելու որվա մասին:

Նախ և առաջ, հարկավոր և գործը լսելու
որվա մասին գյուղդատարանում հայտարարու-
թյուն կախել, վորի մեջ հիշվում են կողմերի և
վկաների անունը, աղքանունը և նրանց տեղե-
կություն և տրվաւմ գյուղխորհրդի միջոցով:

Յեթե քաղաքացիական գործի պահանջատերն
ապրում ենի ուրիշ գյուղում, այդ դեպքում գործը
լսելու մասին տեղեկություն և տրվում այն գյուղ-
խորհրդի միջոցով, վորտեղ նա ապրում եւ:

Յեթե քրեական գործում տուժողը և մե-
ղադրյալը ապրում են մի ուրիշ գյուղում կամ
դանազան գյուղերում և վոչ այն գյուղում, վոր-
տեղ քննվում եւ գործը, ապա նրանց դարձյալ
ժամանակին հարկավոր և տեղեկացնել գործը
լսելու որվա մասին համապատասխան գյուղ-
խորհրդի միջոցով:

Նույնը վերաբերում եւ և վկաներին, վո-
րոնք ապրում են վոչ այն գյուղում, վորտեղ
քննվում եւ գործը:

21.Գործի դատաքննությունը տեղի յեւ
նենում դռնբաց յեկ բերանացի:

Գործը դռնբաց նիստում լսելը մեծ կուլտու-
րական և դաստիարակչական նշանակություն

ունի. Գյուղդատարանն այսպիսով շիվում ե
մասսաների հետ, իսկ մասսաները իրենց ըն-
տրած դատավորների (ժողատենակաների) հետ։
Ամեն մի գործ, վոր լսվում ե մասսաների ներ-
կալությամբ, վորոշ ազդեցություն ե թողնում
նրանց վրա։ Այդ ազդեցությունը ավելի նկա-
տելի յե այն ժամանակ, յերբ քննվում ե քրե-
ական գործ։ Որինակ, ամուսնու կողմից իր կը-
նոջը ծեծելու վերաբերյալ դործերը մեծ ուղղիչ
դաստիարակչական նշանակություն ունեն, յերբ
դատաքննության ժամանակ պարզվում ե, վոր
կնոջ ծեծելը ավանդական, հին գյուղական կեն-
ցաղի մնացորդ ե, վորի դեմ հարկավոր ե պար-
քարելա Յեվ գյուղդատարանը, կիրառելով ա-
մուսնու վերաբերմամբ, որինակ՝ հասարակական
պարսավանք, վորպես ամենանպատակահարմար
ուղղիչ-դաստիարակչական միջոց, դրանով նա-
խազգուշացնում ե նիստին ներկա յեղող գյուղի
քաղաքացիներին, վոր ապաղայում ծեծի դեպ-
քեր տեղի չունենան, վոր ամուսնու և կնոջ հա-
րաբերությունները լինեն հավասար, և վոր
խորհրդակին հասարակաբերմ ամուսնությունը
վոչ այլ ինչ ե, բայց յեթե 2 աշխատավորների
կամագոր միություն։

22. Նիստը բանալուց հետո նախագահը
կողմերին, ինչպես նաև մեղադրյալին բացա-

ՏՐՈՒՄ է, վոր նրանից իրավունք ունեն մերժում
հայտնելու թե զյուղական դատավորի յեկ թե ա-
տենակալների դեմ:

Թե ինչ և արդյոք մերժումը, և թե ինչ
պարագաններում կարելի յե մերժում հալտնել
զյուղատավորի և ժողատենակալների դեմ, այս
մասին տես 14 և 15 հոդվածները և այդ հոդ-
վածների պարզաբանությունը:

23. Գյուղական դատարանը պարզում է,
թե կողմերից, վկաներից յեկ զործին մասնակ-
ցողներից ով և ներկայացել նիստին, յեկ վըն-
ռում ե՛ կարելի յե զործը այդ պայմաններուն
լսել, թե վոչ:

24. Կողմերի առանց նարգելի պահառ-
ների չներկայանալը չի կասեցնում զործի դա-
տաժնուրյունը, յերե դատարանը նրանց ներկա-
յանալն անհրաժեշտ չի նամարում:

ՅԵԹԵ քաղաքացիական գործում կողմերը,
այսինքն՝ պահանջատերը և պատասխանողը, իսկ
քրեականում—տուժողը և մեղաղբարը, չնայած
ժամանակին տեղեկություն են ստացել գործը
լսելու որպա մասին, սակայն առանց հարգելի
պատճառների չեն ներկայանում նիստին (հար-
գելի պատճառներ են՝ հիվանդությունը, գյու-
ղից բացակայելը և այլն), այդ հանգամանքը չի
դադարեցնում գործի դատաքննությունը (իհար-

կե, յեթե դատարանը նըանց ներկայությունը անհրաժեշտ չի գտնում): Գյուղղատարանն այս դեպքում, քննում ե գործը նըանց բացակայությամբ, յեթե հարկավոր ե՝ հարցաքննում և վկաներին և առհասարակ կատարում ե այն բոլոր գործողությունները, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի վորոշում կալացնելիս վոչ մի կասկած չլինի պահանջատիրոջ պահանջի կամ տուժողի մեղադրանքի մասին:

25. Վկաների կամ գիտակ անձանց հարցելի պատճառի (նիվանդություն, զյուղից բացակայություն յեկ այլն) չներկայանալու դեպքում զյուղական դատարանը կարող է նրանց տուգանել մինչեվ մեկ ուրբի:

Վկաների և գիտակ անձանց ներկայանալը կամ չներկայանալը եյական նշանակություն կարող է ունենալ գործի համար. գործի լուծումը կարող է արագանալ, յեթե վկաները կամ գիտակ անձինք, կատարելով իրենց քաղաքացիական պարտքը, ժամանակին ներկայանում են դատարանին: Յեթե որենքը թույլատրում է, վոր կողմերի բացակայության դեպքում կարելի է գործը լսել, ասլա նույնը չի կարելի ասել վկաների ու գիտակ անձանց վերաբերմամբ, քանի վոր այս կամ այն հանգամանքը ստուգել կամ հարցը պարզել կախված է վկաների ցուց

մունքից կամ դիտակ անձի պատճառաբանած
կարծիքից:

Հենց այս տեսակետից ել որենքը գլուղդա-
տարանին իրավունք եւ վերապահում վկաներին
կամ գիտակ անձանց առանց հարգելի պատճա-
ռի դատարանը չներկայանալու դեպքում տու-
գանել մինչև մեկ ոռւբլու սահմաննեում։ Գանձ-
ված դուժարը հատկացվում եւ տեղական բյուղջե-
յին։

26. Վիրավորաններ յեվ հարվածներ հասց-
նելու կամ ծեծելու գործերում (9-րդ հոդ. «ա»
յեվ «բ» կետերը) բննելիս տուժողի չներկայա-
նալու դեպքում գործը կարնվում ե, սակայն
մեղադրյալն իրավունք ունի խնդրելու, վոր
գործը ըստ եյության բննվի։ Յուրաքանչյուր
այդպիսի դեպքում զյուղական դատարանը
պարտավոր ե գործը բննելու.

Այեն մի գործ, վորը մտնում ե գլուղդա-
տարան, պիտի ամենակարճ ժամանակամիջոցում
քննվի (Դ որվա ընթացքում): Յեթե տուժողը,
վորը շահագրգուված ե, վոր գործը լսվի, չի դա-
լիս դատարան, այդ նշանակում ե, վոր ինքը
տուժողը չի հետաքրքրվում իր գործով և դա-
տարանը պարտավոր չե իր գործը հետաձգել,
վորպեսզի շահագրգուված անձը ներկա լինի դա-
տաքննությանը։ Իհարկե, կարող են լինել դեպ-

քեր, լեռը գյուղդատարանին հայտնի լե կամ հայտնում են, վոր տուժողը հարգելի պատճառով ներկա չի դատաքննության. ալդ դեպքում գյուղդատարանը կարող ե գործը հետաձել և լսել մյուս անգամ:

Մենք ասացինք, վոր տուժողի ջներկայանալու դեպքում գործը կարճվում ե, սակայն մեղադրյալը, վորը ներկա լե դատաքննության կտրող ե պահանջել, վորպեսզի գործը նշանակած որը քննվի և վորոշում կայացվի: Մեղադրյալի այդպիսի հայտաբարությունը գյուղդատարանի համար պարտադիր ե: Ինչով բացատրել, վոր որենքն այդպիսի կանոն ե սահմանում: Այս մեկը, վորը մեղադրվում ե այս կամ այն արարքի մեջ և դատի յե հանձնվում, շահագրգոված ե, վորպեսզի նրան հնարավորություն տրվի ապացուցելու դատարանի առաջ, վոր մեղադրանքը նրա վերաբերմամբ անհիմն ե: Եթե գանդատավորի բացակալության դեպքում գյուղդատարանը գործը կարճում ե և աչքաթող ե անում մեղադրյալի հայտաբարությունն այն մասին, վոր նա կապացուցի, վոր դանդատավորը զրապարտել ե նրան, մեղադրելով որինակ, ծեծի կամ հայնոյանքի մեջ, ապա գյուղդատարանը դրանով սխալ գործած կլինի: Այդպիսի դեպքերում գյուղդատարանը պետք ե գործը քննի:

Յեթե դատաքննության ներկա չլինեն և
տուժողը և մեղադրյալը, վորոնց ժամանակին
հայտնված ե գործը լսելու մասին, գործը
գլուղդատարանի կողմից անպայման կարճվում ե:

27. Քաղաքացիական գործերում կողմերը
(հայցվոր յեկ դատակիր), ինչպես նայեվ քեա-
կան գործերում տուժողը յեկ մեղադրյալը պետք
ե ապացուցեն այն հանգամանեները, վորոնց
վրա նրանք նիմնվում են, մասնավորապես՝
հայցվորը պետք է ապացուցի իր պահանջի
նիմքը յեկ չափը:

Որինակ, յեթե պահանջատերը պահան-
ջում ե բռնագանձել պատասխանողից գառի
արժեքը Յ ոռւրլի այն հիմունքով, վոր պատաս-
խանողը քարով խփել ե գառին և վոտքը կոտ-
ըել, և նա սախզված ե յեղել մորթել գառը,
իսկ վերցրած միսն ու մորթին արժի ընդամե-
նը Յ ոռւրլի, ապա նա պիտի ապացուցի, վոր
իրոք այդ դեպքը տեղի յե ունեցել, և գառը
արժե Յ ոռւրլի, իսկ մորթին ու միսը արժեն
վոչ ավելի քան Յ ոռւրլի. իսկ նա այդ կարող
է հաստատել վկաների ցուցմունքներով, վորոնց
հարցաքննության մասին նա միջնորդություն ե
հարուցում գլուղդատարանի առաջ Յ Եթե դա-
տարանը գտնում ե, վոր վկայի կամ վկաների
հարցաքննությունը ելակտն ե գործի հումար,

թուլլ և տալիս այդ: Յեթե պատասխանողը առարկություն անի դատապահանջի դեմ, նույնական պիտի ապացուցի այն հանգամանքները, վորոնց վրա նա հիմնվում է. որինակ, յեթե այս դեպքում պատասխանողը հայտնում է, վոր այդ որը գյուղում չի յեղել, կամ արժե 5 ռ. և վոչ թե 9 ռուբլի, ապա նա պիտի այդ հանգամանքը հաստատի վկաների ցուցմունքով դատի ժամանակ:

ՄԵՆՔ վերցրինք քաղաքացիական գործերի մի տեսակը: Սակայն պահանջներ կարող են լինել զանազան՝ որինակ, մեկը մյուսից կարող ե պահանջի պարտք տված դրամը, վոխ տված հացահատիկը, հատուցում այս կամ այն մնասը պատճառելու համար և այլն:

Այդ բոլոր դեպքերում պահանջատերը պիտի ապացուցի իր պահանջը, իսկ պատասխանողը՝ իր առարկությունները:

Նույնը պետք է ասել և քրեական գործերի վերաբերմամբ: Տուժողը և մեղադրյալը պիտի ապացուցեն այն բոլոր հանգամանքները, վորոնց վրա նրանք հիմնվում են. մասնավորապես առաժողը, որինակ, պիտի ապացուցի, վոր նրա խոտանեղը գիտավորեալ կերպով փշացրել և նրա հարևանը կամ վոր իրոք դեպքը (ծեծը կամ վիրավորանքը) տեղի լի ունեցել, և իրոք

մեղադրյալը նպատակ և ունեցել տուժողին ֆիզիքական ցավ պատճառել (ծեծ), կամ անպատճել և խոսքով զբավոր կամ գործողությամբ (վիրավորանք):

Յեթե մեղադրյալը առարկում և տուժողի հայտարարության ու բացատրության դեմ, ապա նա նույնպես պիտի ապացուցի իր առարկությունը այս կամ այն փաստերով:

28. Գործի վերաբերյալ ապացույցներ կարող են ծառայել վկաների ցաւցմունքները, ամեն տեսակ գրավոր փաստաթղթերը, գիտակ անձանց յեզրակացուրյունները յեվ իրային ապացույցները,

Այդ բոլոր ապացույցներից գլխավորը, գրավոր փաստաթղթերը և վկաների ցուցմունքն եւ կողմերը ի հաստատություն այս կամ այն հանդամանքի կարող են իրենց դիմումների մեջ ցուց տալ վկաների կամ կարող են իրենց հետ, գործը քննվելու որը, դատարան բերել վկաներին և խնդրել դատարանից նըանց հարցաքննել:

Դրավոր փաստաթղթերը կարող են շատ տեսակի լինել. որինակ՝ ստորագրություն, անդորրագիր, հաշիվներ և այլն:

Գիտակ անձ կարող ել լինել ամեն մի քաղաքացի, վորը այս կամ այն հարցին լավ ծանոթ եւ կարող են հալանել իր հիմնավորված

կարծիքը։ Որինակ՝ մեղադրյալը՝ նամակի մեջ հայոյել ե տուժողին, լեթե մեղադրյալը Ժըստում ե վոր նամակը նա չի գրել կամ ստորագրել, գյուղդատարանը կարող ե հրավիրել գիտակ անձ պարզելու այն հանգամանքը, թե արդյոք նամակի տակ լեղած ստորագրությունը մեղադրյալի ստորագրությունն ե, թե վոչ, այդ հանգամանքը պարզելու համար, վորպես գիտակ անձ, դատարանի կողմից կարող ե հրավիրվել, որինակ՝ տեղական ուսուցիչներից մեկը։

Իրեղեն ապացույցն այն ե, յերբ մեղադրյալը այս կամ այն գործողության հետևանքով թողնում ե վորոշ հետք, առարկա և այլն. որինակ, լեթե նամակի մեջ մեղադրյալը հայհոյել ե տուժողին, ապա հենց այդ նամակը իրեղեն ապացույց ե, լեթե մեկին ծեծել են մտրակով, մտրակը իրեղեն ապացույց ե, և այլն։

29. Այս կամ այն ապացույցներն ընդունելը փորում ե գյուղական դատարանը, նայած գործի համար եյտկան նշանակություն ունի, քեզ վոչ։

Վորպես ընդհանուր կանոն, ապացույցներ վերոհիշյալ իմաստով ներկայացնում են դատարանին կողմերը՝ պահանջութերը և պատասխանողը, տուժողը և մեղադրյալը, ի հաստատու-

թյուն այն հանգաժանքի, վորի վրա նրանք հիմնվում են: Բայց դատարանին ե իրավունք վերապահվում դնահատելու բոլոր ապացույցները, և լեթե նրանք գործի համար կարող են ելական նշանակություն ունենալ, այդ գեղքում նա ընդունում ե, այսինքն հարցաքննում ե վկաներին, պահանջում ե դիտակ անձանց յեզրակացություն այս կամ այն հարցի մասին, ստուգում ե այս կամ այն փաստաթղթի իսկությունը, կատարում ե տեղական գննություն և այլն:

30. Գյուղական դատարանը նայելի իր նախաձեռնությամբ կարող ե ապացույցներ նավաել, այն ե՝ նարցաբննել վկաներին ու գիտակ անձանց, պահանջել այս կամ այն փաստարդերը, զննություն կատարել յեվ այն, յերե նա այդ անհրաժեշտ ե համարում:

Այս իրավունքը, վորը վերապահված ե դյուղդատարանին, շատ ելական ե: Հաճախ պատահում ե, վոր դատարանի առաջ կանգնած են աշխատավոր գյուղացիներ և գեղջկուհիներ, վորոնք իրենց իրավունքները չեն կարողանում պաշտպանել: Նման դեպքերում դատարանը նըրանց ոգնության ե հասնում և իր նախաձեռնությամբ հավաքում և ապացույցներ այս կամ այն հանգամանքը պարզելու և ստուգելու հա-

մար: Վորովհետեւ կողմերի պաշտպանությունը
վոչ մի դեպքում չի թույլատրվում գյուղդա-
տարանում, ուստի գյուղդատարանին վերապահ-
ված այդ իրավունքը շատ կարևոր է և բղխում
ե մեր խորհրդային դատարանի հիմնական նպատ-
ակից՝ պաշտպանել աշխատավորների շահերը:

31. Վկաներին հարցաբենելուց առաջ դա-
տարանը պարզում է կողմերի յեվ վկաների
փոխհարաբերությունները, ինչպես նայեվ նա-
խազգուշացնում է վկաներին, վոր սուս վկա-
յուրյուն տալու համար նրանք պատասխանատու
յեն ժողովրդական դատարանի առաջ:

Գործը անաշառ կերպով քննելու տեսակե-
տից կարևոր է, վորպեսզի կողմերի և վկաների
փոխհարաբերությունները չլինեն ըարեկամա-
կան և վկաները շահագրգռված չլինեն գործի
յելքով. վկաները պարտավոր են դատարանի
առաջ արդարացի ցուցմունքներ տալ, վորի մա-
սին նախագահը զգուշացնում է նրանց, հակա-
ռակ դեպքում նրանք ակնհայտնի սուս տեղե-
կություն տալու համար պատասխանատու լին
ժողովատարանի տռաջ:

Համաձայն մեր Թրեական Որենսգրքի՝ ակ-
նահայտնի սուս տեղեկություններ, ցուցմունք-
ներ, վկայություն տալու համար մեղավորները
յենթարկվում են ազատազրկման կամ հարկա-

Դի՛ք աշխատանքների մինչև Յ ամէս ժամանակով:

32. Վկաները հարցաբննվելուց առաջ չեն կարող ներկա լինել գործի բննությանը:

Այս հանդամանքը նույնպես կարեոր և գործը արդարացի կերպով լուծելու տեսակետից: Յեթե, որինակ, տուժողը խնդրում և դատարանից հարցաքննել դատական նիստում ներկա լեզող նրա վկաներին, և դատարանը հարգում և նրա խնդիրը, ապա դատարանը պարտավոր և վկաներին հեռացնել նիստից և ապա ամեն մեկին առանձին հարցաքննել: Հարցաքննված վկան կարող և նիստին ներկա լինել.

Ալդ տրվում և այն նկատառումով, վորապեսզի վկաները իրենց ցուցմունքը չհամաձայնեցնեն միմյանց հետ:

Այստեղ պետք է ընդգծել, վոր վկաներին, հավասարապես հարցեր կարող են առաջարկել ինչպես նախագահը, նույնպես և ժողատենակալները: Նույնը կարող են անել և կողմերը:

33. Յեթե բաղաբացիական գործերում կողմերից մեկին հայտնի յեւ վոր վկան շահագրգրուված և գործի յելքով, կամ վկայի յեվ կողմի միջեվ հատուկ փոխնարարերու թյուն գոյություն ունենալու դեպքում, գյուղական դատա-

րանը իր հայեցողությամբ կարող ե հարցաքըննել կամ չհարցաքննել այդ վկային. Քրեական գործերում բռւյլ ե ՏՐՎՈՒՄ հարցաքննել վկաներին՝ անկախ կողմերի յեզ վկանների փոխհարթերությունից:

Այստեղ պիտի նկատել, վոր որենքը նման դեպքերում քաղաքացիական գործերի համար մի կարգ ե սահմանում, իսկ քրեական գործերի համար՝ մի այլ կարգ։ Յեթե քաղաքացիական գործերում այս կամ այն վկան կողմերից մեկի բարեկամն ե, ապա մյուս կողմի միջնորդության համաձայն գյուղդատարանը կարսղ ե ՀԵՆԴՐՋԱՔՆՆԵԼ այդ վկային, բայց կարող ե և հարցաքննել. Վերջին դեպքում դատարանը ինքն ե վորոշում, թե այդ վկայի ցուցմունքը վորքան արժեք ունի:

Քրեական գործերում այդ հանգամանքը նշանակություն չունի, և վկաների հարցաքննությունը թույլ ե տրվում գյուղդատարանի կողմից, յեթե այդ կարեոր ե գործի համար, անկախ վկաների և կողմերի փոխհարաբերությունից։

34. Գյուղական դատարանը գործը կողմերի հայտարարության հետեվանքով կարող ե կարենել միայն այն դեպքում, յերբ այդ հաւաքությունը չի հակասում գործում մասնակցող տնտեսապես բռւյլ կողմի շահերին։

Թե քրեական և թե բաղաքացիական գործերում, յեթե կողմերը ուղուած են հաշտվել, պետք է նկատի ունենալ հետեւալը.

Յեթե մի ունեող գյուղացի ծեծել կամ վիրավորել ե բատրակին, և բատրակը նրա դեմ գանգատ ե տվել, կամ մի աղքատ գյուղացի մի հարուստ զյուղացուց իր ծախած խաղողի կամ յուղի փողն ե պահանջում և դիմել ե զյուղատարանին, սակայն դործի քննութիւնն ժամանակ բատրակը կամ աղքատ գյուղացին հայտնում ե, վոր իրենք հաշտվել են հակառակ կողմի հեա և խնդրում են գործը կարճել, ապա զյուղատարանը կարող ե գործը կարճել միայն այն դեպքում, յեթե այդ հաշտութիւննից չի մնանալու տնտեսապես թույլ կողմը (բատրակը կամ աղքատ գյուղացին):

Գյուղատարանը պետք է այդ հանգամանը նկատի ունենա, վորովիեւակ կարող են տեղի ունենալ այսպիսի դեպքեր, որինակ՝ հարուստ գյուղացին կարող ե բատրակին փող խոստանալ, և բատրակը կարիքից ստիպված հաշտվի նրա հետ, և նրան ծեծող կամ վիրավորող մարդը մնա անպատիֆ. կամ հարուստ գյուղացին կարող ե աղքատ պահանջատիրոջը փող պարտք տալ կամ սերմացու ցորեն փող տալ, յեթե նա հրաժարվի իր պահանջից, և աղքատը

փողի կամ սերմացուի մեծ կարիք ունենալով՝
հրաժարվում ե իր արդարացի պահանջից:

**Այսպիսի դեպքերում գյուղատարանը պի-
տի միշտ պաշտպանի գործին մասնակցող տըն-
տեսապես թույլ կողմի շահերը և վորոշ դասա-
կարգավին գիծ վարի:**

35. Յերբ գյուղական դատարանը գտնում
ե, վոր դատական բննուրյամբ գործը բավա-
կանաչափ պարզված ե, նեռանում է խորհրե-
դակցության յեվ փորություն և կայացնում: Խոր-
հրդակցության ժամանակ կողմնակի անձինք
չեն կարող ներկա լինել:

**Այստեղ հարկավոր ե միան ընդգծել, վոր
գյուղատարանը դատաքննությամբ պարզված
գործի ամբողջ տվյալների հիման վրա կայաց-
նում ե այս կամ այն վորոշումը: Վոչ մի կա-
րիք չկա, վորպեսզի գյուղատարանը իր վորո-
շումները պատճառաբանի:**

**Գյուղատարանը գյուղական հասարակու-
թյան դատարան ե, և նրա վորոշումը՝ հիմնվե-
լով գործի բոլոր փաստական տվյալների վրա,
միևնույն ժամանակ բղխում ե նրա հեղափոխա-
կան խղճից:**

36. Գյուղական դատարանը կազմում ե
գործի վերաբերյալ համառու արձանագրու-
թյուն, վորը պետք ե պարունակի:

ա) արձանագրությունը կտպմելու տարին, ամիսը յեվ ամսաթիվը.

բ) դատավորների անունները յեվ ազգանունները.

գ) հայցվորի յեվ դատավորի կամ տուժողի յեվ սեղադրյալների անունները յեվ ազգանունները.

դ) Վկաների համառու ցուցմունքները.

ե) գյուղական դատարանի վորուումը առանց պատճառաբանության.

Թէ քաղաքացիական և թէ քրեական գործերի վերաբերմամբ ինչպիսի արձանագրություններ պետք են կազմել, այդ արձանագրության համապատասխան ձեզ կցվում են այս գրքույին (տես հավելված):

37. Գյուղական դատարանի վորուումը կայացվում է ձայների մեծամասնությամբ, դատավորներից փոք վոք չի կարող ձեռնպան մնալ. յուրաքանչյուր դատավոր կարող է նայենել իր առանձին կարծիքը, վորը չի հայտարկում, սակայն կցվում է արձանագրությանը. Ժողովրդական ատենակալի անգրագիտության դեպքում դատավորն ինքն է ձեվակերպում երա կարծիքը, վորը կցվում է արձանագրությանը.

38. Վորուումը սուրագրվում է դատավոր-

ների կողմից յեկ հայտարարվում է դոնքաց նիստում։ Ժողովրդական տեսնակալի անգրագիտության դեպքում դատավորը ինքն է ստորագրում Երա փոխարեն, այդ ստոին համապատասխան նիշատակություն անելով առձանագրության մեջ։

Դաստիարակչական մեծ նշանակություն կարող է ունենալ մասսաների համար, յեթե գյուղդատարանը վորոշ գործերի նկատմամբ, վորոնք վերաբերում են գյուղացիական հին կենցաղի մնացորդներին (որինակ՝ ամուսնու կողմից կուղը ծեծելը, քահանայի պահանջը՝ կրոնական ծիսակատարության համար վարձատրություն տալու մասին և այլն), իր վորոշումները դռնքաց դատական նիստում հայտնելով, միենույն ժամանակ բացատրի այդ վորոշումների ուղղիչ-դաստիարակչական նշանակությունը։

Գ Լ Ո Ւ Խ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

39. Գյուղական դատարանի վորոշումները վերջնական են յեկ գանգատարկման յենքակաչնեն։

40. Ցերե ժողովրդական դատավորը, վորի տչանում գործում է գյուղական դատարանը, գտնում է, վոր այդ դատարանի վորոշումը եյա-

պես խախտում է որենքը կամ աշխատավոր մասսաների շահերը, նա անմիջապես դադարեցնում է գյուղական դատարանի վորուման կատարումը յեվ գործը մՏցնում է ժողովրդական դատարան ըստ եյության բննելու նամար ընդհանուր կարգով:

Գործը հսկողության կարգով ժողովը դադարեցական դատարանի բննության հանձնելու յեվ միաժամանակ գյուղական դատարանի վորուման կատարումը դադարեցնելու իրավունքը պատկանում է նայեվ դատախազության:

ՆԱ.ՆՈԹ.—Գյուղական դատարանի վորումները հսկողության կարգով բննության առնելու համար սահմանվում է ժամանակամիջոց:

Այս հոդվածներով սահմանվում ե գյուղատարանների վորոշումների գանգատարկման կարգը: Վորապես ընդհանուր կանոն, գյուղղատարունների վորոշումները թե քաղաքացիական և թե քրեական գործերի վերաբերմանը վերջնական են և սովորական կարգով գանգատարկման յինթակա չեն, այդ նշանակում ե, վոր գյուղղատարանների վորոշումները ենց կալացնելու որից ուժի մեջ են մտնում, և կողմերը ստանալով գյուղղատարանի վորոշման պատճենը՝ կարող են դատարանի վորոշումը անմիջապես ի կատար ածել: Նախկին կարգը, յերբ գատակ-

ցիաների ամեն մի վորոշում լենթակա, յեր
բողոքարկման, և կողմերը կարող ելին Շ որվա
ընթացքում գանգատ տալ գավառակալին դոր-
ծկոմին, — ուներ մի շարք թերություններ. — վո-
րոշումը գանգատարկելու դեպքում մինչև դոր-
ծը նորից քննելը (իհարկե այն դեպքում, յերբ
գանգատը հարգվում եր գավառակային դործ-
կոմի կողմից) անցնում եր յերկար ժամանակ,
և շնորհիվ այս հանգամանքի տեղի յեր ունե-
նում գործի ձգձգում, բացի սրանից գավառա-
կալին գործկոմները, վորոնք ընդունում երին
դատսեկցիաների վորոշումների դեմ տրվող
գանգատները, ծանրաբեռնված լինելով ընթա-
ցիկ գործերով, հնարավորություն չունելին
պատշաճ կերպով զեկավարելու դատսեկցիանե-
րի գործունելությունը, և այդ հանգամանքը բա-
ցասարար եր անդրադառնում դատսեկցիաների
գործունելության վրա.

Այդ բոլոր թերություններն ու բացերը վե-
րացնում ենոր որենքը, վորը և սահմանվում
ե, վոր գյուղդատարանի վարոշումները, ինչպես
մենք ընդգծեցինք վերհսում, վերջնական են և
գանգատարկման լենթակա չեն. իսկ այդ հան-
գամանքը պարտականություն է դնում պատղ-
դատարանի վրա մեծ ուշադրությամբ գործը
քննել, բազմակողմանի կերպով պատշել գործի

բոլոր հանգամանքները և ապա վորոշում կայսցնել:

Բայց կարող են լինել դեպքեր, թերբ գյուղատարանը կայացնելով այս կամ այն վորոշումը, երազես խախտում ե որենքը և աշխատավոր մասսանեցի շահերը. հարց ե ծագում, թե արդյոք նման դեպքերում կողմերը ի՞նչ կարող են անել:

Որինակ. դյուղգատարանի անդամներից մեկը քաղաքացիական գործում հայցվորի մոտիկ բարեկամն ե յեղել, պատասխանողը խընդրել ե հեռացնել նրան զատարանի կաղմից, բայց գյուղգատարանը չի հարգել նրա խնդիրը, գործը քննել ե այդ անդամի մասնակցությամբ և վորոշում ե կարացվել բռնազանձել պատասխանողից փոխ տված ցորենի արժեքը՝ 20 ռ.։ Այս դեպքում, յեթե իրոք գատարանի անդամներից մեկը յեղել ե հայցվորի մոտ բարեկամը, նա չեր կարող մասնակցել գործի քննությանը. գործը անաշառ կերպով քննելու տեսակետից նման դեպքեր տեղի չպետք ե ունենան. այստեղ խախտվում ե և որենքը և գործին մասնակցող աշխատավորների շահերը։

Մի այլ որինակ, յերբ գյուղգատարանի կողմից եյազես խախտվում ե որենքը։ Գյուղգատարանը քննության ե առնում ապրուստի

միջոցի (ալիմենտի) վերաբերյալ գործը և ըստ
ելության վորոշում եւ կամ մեղադրյալին դատա-
պարտել հարկադիր աշխատանքների մեկ ա-
միս ժամանակով կամ դրամական տուգանք առ-
նել 50 ռուբլի, հակառակ որենքի պարզ ի-
մաստի:

Քանի վոր ալիմենտների վերաբերյալ գոր-
ծերը առհասարակ յենթակա չեն գյուղատա-
րանի քննության, քանի վոր գյուղատարաննե-
րը չեն կարող նշանակել հարկադիր աշխատանք-
ներ յերկու շաբաթից ավելի ժամանակով կամ
տուգանք 25 ռուբլուց ավելի, ուստի գյուղա-
տարանը այսպիսի դեպքերում ակնհայտնի կեր-
պով խախտում եւ որենքը և աշխատավոր մաս-
սաների շահերը:

Նման դեպքերում շահագրգուված կողմը նույն-
իսկ գյուղինորիուրդը կամ մի վորեւ տեղական հա-
սարակական կազմակերպություն որինակ, փոկիր,
կոռպերացիան, պրոֆմիությունը և այլն կարող
են հայտնել (գրավոր կամ բերանացի) ժողովա-
տավորին կամ դատախազին, վորոնց շրջանում
գտնվում եւ համապատասխան գյուղգուարդանը:
Ժողովատավորը կամ դատախազը այդ գիմուռի
հիման վրա անհօպաղ պահանջում են գործը
գյուղգուարդանից և յեթե իրոք վերոհիշյալ ի-
մաստով որենքի ելական խախտում եւ տեղի ու-

նեցել, անմիջապես դադարեցնում են գյուղդա-
տանի վորոշման կատարումը և գործը մըտ-
ւմ են ժողովատարան ըստ եյության քննելու
համար:

Յեթե վերջինը, իրոք, հաստատում ե գյուղ-
դատարանի կողմից որենքի և աշխատավոր մաս-
աների շահերի եյական խախտումը, բեկանում
ե գյուղդատարանի վորոշումը և նոր վորոշում
է կայացնում համաձայն գործող որենքների:

Գործերի քննության այսպիսի կարգը կոչ-
վում է գործի վերաքննություն հսկողության
կարգով:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր գործը
հսկողության կարգով քննելու դեպքում գյուղ-
դատարանի վորոշումը անմիջապես չի բեկան-
վում վոչ ժողովատավորի և վոչ ել դատախազի
կողմից: Նման դեպքերում նրանք միայն դա-
դարեցնում են գյուղդատարանի վորոշման կա-
տարումը և գործը մտցնում են ժողովատարան
ըստ եյության քննելու համար ժողատինակալ-
ների մասնակցությամբ:

Գործը այս կարգով քննելու համար որենքը
սահմանում է յերեք ամիս ժամանակ: Յեվ այդ
հասկանալի յե. յեթե որենքը սահմանում է,
վոր գյուղդատարանի վորոշումը վերջնական ե
և գանգատարկման լենթակա չե ապա չի կա-

բելի թուզ տալ, վորպեսզի որենքների ելական
 խախտումների դեպքում գործը հսկողության
 կարգով քննվի անվորոշ կամ լերկար ժամանա-
 կով։ Հենց կողմերի շահերի տեսակետից և դա-
 տական ձգձգումները վերացնելու նպատակով
 որենքը սահմանում է լերեք ամիս ժամանակա-
 միջոց գործը հսկողության կարգով քննելու հա-
 մար։ Այստեղ հարկավոր ե ընդգծել նաև այն, վոր
 որենքի վոչ ամեն մի խախտում կարող է հիմք
 ծառայել գործը հսկողության կարգով քննելու
 համար։ Որինակ՝ չի կարող որենքի իս խտում
 համարվել, յեթե գյուղդատարանը չի հարցա-
 քննել կողմերի բոլոր վկաներին, գոնելով վոր
 այս կամ այս հանգամաքը արդեն պարզված է
 գործի տվյալներով։ Թե արդյոք որենքի ինչպի-
 սի խախտում պետք է համարել ելական—այս
 հանգամանքը ամեն անդամ վորոշում են ժողո-
 դատավ ըստ կամ դատախաղը, վորոնց դիմում
 են տալիս շահագրգուժած կողմը, կամ գյուղխոր-
 հուրդը կամ տեղական հասարակական կազմա-
 կերպությունները՝ գյուղդատարանի վորոշումը
 բեկանելու համար։ Համենայն դեպս գյուղդա-
 տարանի վորոշումը եյալես պիտի խախտի ո-
 րենքը կամ աշխատավորների շահերը, վորպես-
 զի հիմք ծառայի ժողոդատավորի կոմ դատախա-
 ղի համար գործը հսկողության կարգով ժողոդա-
 տարանի քննության հանձնելու։

Գ Լ Ա Խ Ե Վ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱ-
ՏԱՐՄԱՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ
ՀՐԱՀԱՆԳՈՒՄԸ

41. Գյուղական դատարանների վորոշում-
ների կատարումը հաղաքացիական գործերի վե-
րաբերմամբ դրվում է զյուղական կատարածու-
ների վրա. կատարման համար տրվում է զյուղ-
դատարանի վորոշման պահենը, վորը կատա-
րողական թերքի ուժ ունի:

Քեհական գործերի վերաբերյալ վորոշում-
ները, վորոնց նիման վրա պեսք և տուգանք
զանձել կամ հարկադիր աշխատանքների նևա-
նակել, ի կատար են ածվում զյուղխորհուրդ-
ների կողմից. Վորոնք կատարման գործողու-
թյունները ափառելուց նետո վճռի պատճենը
համապատասխան սակագրությամբ վերադարձ-
նում են զյուղական դատարաններին:

Այսուղ հարկավոր ե ընդգծել, վոր գլուղ-
դատարանի վորոշումները, ինչպես մենք շեշտե-
ցինք այս գրքութիւնում, վերջնական են և սովո-
րական կարգով նենթակա չեն գանգատարկման:
Քաղաքացիական գործերի վերաբերմար վորո-
շումը կակացնելուց հետու կողմերը անմիջապես

կարող են վերցնել գյուղդատարանի վորոշման պատճենը, վորը համազոր և կատարողական թերթի։ Վորոշումների պատճենները պատշաճ կերպով վավերացվում են գյուղդատարանի նախադահի կամ նրա տեղակալի կողմից և տրվում են ձրիաբար։ Այն դեպքերում, յերբ զյուղդատարանի գործը հսկողության կարգով մտնում ե ժողդատարան և վերջինը, ըստ եյության քննելով գործը, նոր վորոշում ե կալացնում, կողմերը ժողդատարանից են ստանում վճռի պատճենը։ Բոլոր դեպքերում վորոշումները ի կատար են ածում գյուղկատարածուները, վորոնք կատարելով անհրաժեշտ գործողություններ, վորոշումների պատճենները վերադարձնում են դատարանին համապատասխան մակադրությամբ։

Գյուղդատարանի այն վորոշումները, վորոնք վերաբերում են քրեական գործերին, այսինքն՝ հարկադիր աշխատանքներ նշանակելուն և դրամական տուգանք դանձելուն, իրագործվում են հետեւյալ կարգով։ — Վորոշումների պատճենները գյուղդատարանը անհապաղ ուղարկում ե գյուղխորհրդին, վորը և մեղադրյալին հասարակական բնույթ ունեցող վորոշ աշխատանք և տպալիս կատարելու համար (տես 10-րդ հոդվածի պարզաբանությունը) կամ դանձում ե գյուղ-

դատարանի կողմից վորոշված դրամական տուգանքը հոգուտ տեղական բյուջեից: Գյուղխորհութը, կատարելով այդ գործողությունները, նույնպես վերադարձնում է գյուղդատարանին վորոշումների պատճենները համապատասխան մակագրությամբ: Այսպիսով գյուղդատարանները հնարավորություն կունենան հսկելու իրենց վորոշումների կատարման վրա:

42. Գյուղական դատարանի գործունեյունը նշանանքում և Գերազույն դատարանը: Արդարադատության ժողովրդական կոմիսարիափի վրա դրվում և գյուղական դատարանի գործունեյության ընդհանուր հսկողությունը:

Գյուղդատարանների գործնական աշխատանքի ընթացքում կարող են ծագել շատ հարցեր, վորոնց միատեսակ լուծումը կարևոր երուր գյուղդատարանների համար:

Որենքը գերազույն դատարանի վրա պարականություն և դնում հրահանգել գյուղդատարանների գործունեյությունը: Իհարկե այդ հրահանգները Գերադույն դատարանը տալիս ե ժողդատարանների միջոցով, վորոնք իրենց նըստաշրջանների ժամանակ գյուղերում կծանոթանան գյուղդատարանի գործունեյության հետ և, զեկավարվելով Գերազույն դատարանի ցուցումներով, տեղն ու տեղը կկարգավորեն մի շարք

հարցեր, վորոնք վերաբերում են գյուղդատարանների գործունելությանը։ Այդպիսով ժողովատարանների և գյուղդատարանների միջև ստեղծվող կենդանի կապը մեծ նշանակություն կունենա դատարանները լայն մասսաներին մոտեցնելու տեսակետից։

43. Այս կանոնադրության հրատարակմամբ վերացվում են ՀՍԽՀ կենտրոնական սեպտեմբերի 18-ի «Գյուղխորհեղիներին առընթեր դատական սեկցիաներ հիմնելու մասին» վորոշումը (Ռ. յեվ Կարգ. Ժող. 1927 թ. № 14, հոդ. 94), ինչպես նայեք ՀՍԽՀ Արդյողկումատի 1927 թ. հոկտեմբերի 1-ի «Կենտրոնական գյուղխորհեղիներին առընթեր դատական սեկցիաներ հիմնելու վերաբերյալ վորոշումը կրասիկելու մասին» հրահանգը (Ռ. յեվ Կարգ. Ժող. 1927 թ. № 14, հոդ. 95)։



Հ. Ս. Խ. Հ.

Քրետկան և

Քաղաքացիական և

Գ Ո Ր Ծ

193 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

գավառի արջանի
գլուղական դատարանի 193 թ.
ու նիստի:

Նախագահ՝

Անդամներ՝ 1)
2).

Քարտուղար՝

Խովում և գործ ըստ մեղադրանքի
հայի

ԼՍՎԵՑ

1. Յուժողի
Հայովորի բացատրությունը

(Ստորագրություն)

2. Մեղադրյալի
դատասխանողի բացատրությունը

(Ստորագրություն)

(Տես մյուս էջը)

ՎԿԱՆԵՐԻ ՑՈՒՑՄՈՒՆՔԸ

ա)

(Ստորագրություն)

բ)

(Ստորագրություն)

գ)


(Ստորագրություն)

ՎՈՐՈՇՈՒՄ

Նախադահ:

Անդամներ՝

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս արձանագրության ձևը
գործադրվում է թե քրեական և թե քաղաքացիական
գործերի համար:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038724

(154)
ԳՐԱՎ 20 ԿԵՊ. Մաս. (2 $\frac{1}{2}$ մամուլ)

1
A 3328



А. Хандамян

СЕЛЬСКИЕ СУДЫ

Популярное пособие для сельских судов

Госиздат ССР Армении
Эревань—1930